Հավելված 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ վարչության
2022 թվականի դեկտեմբերի -ի N -Լ որոշմամբ
Գործում է սկսած 2022 թվականի դեկտեմբերի 15–ից

Travel card վճարային քարտի արշավի իրականացման պայմաններ

1. Ընդհանուր դրույթներ.

1.1 **Արշավ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից 15.12.2022թ-ից 15.02.2023թ-ը ներառյալ իրականացվող արշավ:
1.2 **Քարտ՝** «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի կողմից տարեկան սպասարկման միջնորդավճարով պատվիրված Travel card Visa վճարային համակարգի հիմնական քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում:
1.3 **Քարտատեր՝** Travel card Visa վճարային համակարգի հիմնական Քարտի քարտապան:
1.4 Արշավին մասնակցելու դեպքում Քարտատերն անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները, որոնք համարվում են վերջնական և անվիճարկելի:

2. Արշավի պայմաններ.

2.1 Արշավի շրջանակներում՝ 15.12.2022թ-ից մինչև 15.02.2023թ-ը ներառյալ, պատվիրելով Քարտը Քարտատերերը կստանան՝

- Միանվագ Welcome bonus՝ 5 000 ՀՀ դրամ,
- Տուրիստական հետևյալ փաթեթների խաղարկությանը մասնակցության հնարավորություն.
    - Բալի,
    - Մալդիվներ,
    - Կիպրոս,
    - Դուբայ,
    - Մոնտենեգրո:

2.2 **Welcome bonus-ի վերաբերյալ.**
Welcome bonus տրամադրվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում.

- Քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում,
- Քարտն Արշավի ընթացքում ակտիվացվել է ԱԳՄ-ի (բանկոմատ) միջոցով,
- Քարտի տարեկան սպասարկման միջնորդավճարը վճարված է և Քարտը չունի որևէ պարտավորություն Welcome bonus-ի վճարման պահին,
- Քարտը գործող է /փակ չէ/ Welcome bonus-ի վճարման պահին:

Welcome bonus-ը տրամադրում է մեկ անգամ՝ Արշավի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:
Welcome bonus տրամադրվում է միայն տարեկան սպասարկման վճարի տարբերակով պատվիրված հիմնական Քարտերի համար: Կից Քարտերին Welcome bonus չի տրամադրվում:

2.3 Տուրիստական փաթեթների խաղարկության վերաբերյալ.

Տուրիստական փաթեթների խաղարկության մասնակցության պայմանները հետևյալն են.

- Քարտեր, որոնք պատվիրվել են Արշավի ընթացքում,
- Քարտն Արշավի ընթացքում ակտիվացվել է ԱԳՄ-ի (բանկոմատ) միջոցով,
- Քարտի տարեկան սպասարկման միջնորդավճարը վճարված է և Քարտի վրա առկա չէ որևէ պարտավորություն խաղարկության իրականացման և մրցանակի տրամադրման պահին,
- Քարտը գործող է /փակ չէ/ խաղարկության իրականացման և մրցանակի տրամադրման պահին:

Տուրիստական փաթեթների խաղարկության լրացուցիչ պայմանները հետևյալն են.

- 5 տուրիստական փաթեթների խաղարկությունը տեղի է ունենալու առցանց եղանակով՝ Արշավի ավարտից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում: Խաղարկությանը օգտագործվելու է Քարտատերերի անվան և ազգանվան առաջին տառերը և Քարտի վրա նշված թվերի վերջին 4 նիշերը:
- Վերոնշյալ երկրների ուղևորության փաթեթները կխաղարկվեն առանձին-առանձին՝ իրար հաջորդելով: Բանկի կողմից կներկայացվի ուղևորության փաթեթը, որից հետո խաղարկության միջոցով կընտրվի հաղթող մասնակիցը:
- Հաղթող 5 Քարտատերերի հետ նույն պահին կապ կհաստատվի Բանկի կողմից Բանկում գրանցված հեռախոսահամարի միջոցով՝ նույնականացման և շահումը հաստատելու նպատակով: Ընդ որում, տվյալ պահին 3 անգամ Քարտատիրոջ հետ կապ հաստատելու անհաջող փորձերից հետո տվյալ ուղղության տուրիստական փաթեթը կրկին խաղարկվելու է այնքան մինչև նոր ընտրված Քարտատիրոջ հետ հնարավոր լինի կապ հաստատել և նույնականացնել: Այս դեպքում հաղթող է համարվում այն Քարտատերը, ում հետ հաջողվել է այդ պահին կապ հաստատել և նույնականացնել:
- Ուղևորության փաթեթը ներառում է 2 անձի երկկողմանի ավիատոմսեր, վերջիններիս կացությունը հյուրանոցում 7 գիշեր, 2 անգամյա սնունդ, փոխադրում օդանավակայանից հյուրանոց և հակառակ ուղղությամբ և վիզայի հետ կապված ծախսերը: Ավիատոմսը (էկոնոմ դասի) և հյուրանոցը ընտրվում է Բանկի կողմից՝ Քարտատիրոջ հետ համաձայնեցնելով մեկնման օրերը: Քարտատիրոջը շահումի վերաբերյալ տեղեկացնելուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում վերջինս Բանկին պետք է տեղեկացնի մեկնման նախընտրելի օրերի և երկրորդ անձի անձնագրային տվյալների տեղեկատվության վերաբերյալ: Մեկնման օրը պետք է լինի Բանկին տեղեկացնելուց նվազագույնը 30 օր հետո, սակայն ոչ ուշ քան 30.09.2023 թվականը: Վիզայի հետ կապված տվյալ երկիր մուտք գործելու անհնարինության դեպքում Բանկի կողմից տվյալ Քարտատերերին կառաջարկվի Դուբայ ուղղությունը: Մեկնելու անհնարինության դեպքում մրցանակը/շահումը համարվում է անվավեր և գումարային փոխհատուցում չի տրամադրվում:

- Բանկը շահող Քարտատերերի լուսանկարները և/կամ վիդեոհոլովակները նկարահանելու և հրապարակելու համար նախքան ուղևորության մեկնումը հրավիրում է Բանկ: Քարտատերերը, ովքեր հրաժարվում են սույն պայմանի կատարումից, կորցնում են շահումը, և պատահականության կարգով ընտրվում է հաջորդ շահող Քարտատերը:

2.4 «ԱյԴի Բանկ» ՓԲԸ և «Իդրամ» ՍՊԸ աշխատակիցները չեն մասնակցում ուղևորության խաղարկությանը:

2.5 Քարտատերերի կողմից Արշավին մասնակցությունը կատարվում է ավտոմատ կերպով և վերջիններիս կողմից լրացուցիչ գործողություն չի պահանջվում:

2.6 Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ Բանկի պաշտոնական կայքում հրապարակելուց հետո: